

ՆՈՐ ՌԻՍՏ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Գ/ն 20 Փայրա

Բ. ՏԱՐԻ 3 ԳԵՄԱՆՈՒՆԻ ՍԱՆԻ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ 3 ՅՈՒՆՎՈՐ 1877

Ն. Տ. ՅՈՒՆՎՈՐ 15 ԹԻՒ 1941

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՍՄ
ԵՐԵՎԱՆԻ ԱՆՍՏԱՆԻ Կ. ՊՕԼՍՈՅ

(Շար է- Վերջ ԳԵՄ. ԹԻ- 1939)

Առաջին օրը քանի՜ թաղի բնակչաց քուէն կարենայ առնուիլ, անով պիտի բաւակաւ նայուէ, և իրիկոսան դէմ քուէ տուիլին երկու կողմանքն ի ներկայութեան յանձնախումբի անդամաց պիտի գոցուի, և բանալիին մէկն ընտրական գործողութեանց վերատեսչին, միւսն ալ յանձնախումբի նախագահի քով պիտի մնայ: Քուէտուիլին վրայի բացուածը թուղթով մը պիտի գոցուի, և ասոր չորս կողմէն ընտրութեանց վերատեսչին և յանձնախումբի նախագահին և ներկայ անդամաց կնիքովը պիտի կնքուի: Հետեւեալ առաւօտ, ի ներկայութեան յանձնախումբի անդամաց, քուէտուիլին վրայի թուղթը պիտի պատուուի, և քուէարկութիւնը պիտի շարունակի, և ընտրական ետեւ սրոյշեալ օր մը յանձնաժողովոյ անդամաց և թաղին բնակիչներէն ներկայ գտնուող անձանց առջեւ քուէտուիլը պիտի բացուի, քուէհամարը պիտի կատարուի, և քուէից մեծամասնութիւնը վաստակող կերպու անձինք՝ մին իշխամ և միւսըն ոչ իշխամ՝ յիշեալ շրջանակին Պատուիրակի պիտի ըլլան: Եթէ շրջանակի մը մէջ բնակչաց մէկ կարգէն ընտրութեան արժանի մարդ չգտնուի, ուրիշ թաղէ և շրջանակէ անձ մը պիտի կրնայ ընդունուիլ: Մեծա-

մասնութիւն վաստակողներուն մէջ եթէ հաւասար քուէ առնողներ գտնուին, վիճակ պիտի ձգուի: Եթէ քուէհամարը մէկ առուր մէջ չկատարի, նոյն օրը մինչեւ իրիկուն եղած քուէհամարին տեղեկագիրը պիտի չինուի, և յանձնախումբի անդամը զայն ստորագրելով քուէտուիլին մէջ պիտի դնեն: Տեղեկագիրն և դեռ քուէհամարը չկատարուած քուէները քուէտուիլը գրուելէ ետեւ պիտի կնքուի, և հետեւեալ օրը քուէհամարը պիտի շարունակի: Այս եղանակը պիտի պահուի մինչև քուէհամարին վախճանը:

11. Պէտք է գիտնալ որ ամեն շրջանակի բնակիչը հրաւեր ընդունելէ մինչև հինգ օր քուէարկութեան իրաւունք ունին: Այս պայմանաժամին մէջ քուէարկութիւն չկատարողներն յետոյ բողոքելու իրաւունք չը պիտի ունենան: Անձամբ ներկայ չգտնուողներն իրենց քուէն նամակաւ կրնան զրկել հետեւեալ կերպով. քուէն պահաւանի մը մէջ պիտի դրուի, եւ յանձնախումբի նախագահին ուղղեալ նամակն և յիշեալ պահաւանով քուէն ուրիշ պահաւանի մը մէջ պիտի դրուի և զրկուի: Նամակաւ զրկուած քուէներն իւրաքանչիւր թաղի բնակչաց քուէի կարգն եկած ժամանակ՝ արտաքին պահաւանը միայն պիտի բացուի, և ներքին պահաւանն առանց բացուելու քուէտուիլը պիտի ձգուի, զանկէն մէջ քուէն զրկող անձին անուան առջեւ դիմ մը քաջուելով: Եթէ նամակներուն զիրը չկարենայ կարգացուիլ, կամ քուէտուած անձին արհեստն ու-

մահանունը գրուած չըլլալուն պատճառաւ ս'վ ըլլալը չգիտցուի և եթէ քուէթղթին վրայ պէտք եղած երկու անուանէ աւելի գրուած ըլլայ, այսպիսի քուէթուղթն ոչնչացած համարուելով քուէհամարի չդրուի:

12. Ամեն ոք՝ Պատուիրակի ընտրութեան համար՝ իւր քուէն յանձնախումբին առջեւ, և կամ յանձնախումբի նախագահին զրկած նամակաւ տալու պարտաւոր է փոխանորդի միջոցաւ քուէարկութիւն ներելի չէ:

13. Շրջանակի ընտրութիւնը վերջանալէ ետեւ, յանձնախումբը տեղեկագիր մը կը պատրաստէ ընտրեալ երկու Պատուիրակաց ընդունած քուէից քանակութիւնը ցուցնելով: Ընտրութեան վերատեսուչը տեղեկագիրը կը վաւերացնէ և քաղաքապետութեան (Շէհր Էմանէթի) կը զրկէ: Քաղաքապետութիւնը նամակաւ Պատուիրակաց կը ծանուցանէ իրենց ընտրութիւնն, որ լրագրաց միջոցաւ ալ կը հրատարակի:

14. Եթէ Պատուիրակաց մին հրաժարի կամ երեսփոխանութիւնն օրինաւոր պատճառաւ մը բաց մնայ, անոր անունէն ետեւ մեծամասնութիւն ընդունող անձն իրեսփոխան կը ըլլայ, որ նմանապէս յանձնախումբին տեղեկագրով քաղաքապետութեան պիտի ծանուցուի, և նախորդ յօդուածին համաձայն պէտք եղած գործողութիւնը պիտի կատարուի:

15. Վերոյիշեալ քան շրջանակի Պատուիրակաց ընտրութիւնը մինչև Սեփեթի 15 և

փետրվարի 7 հինգշաբթի օրը պիտի վերջանայ: Քաղաքապետութիւնը Պատուիրակաց հրաւեր պիտի գրէ նշանակեալ օր մը սահմանուած տեղը գումարուելու:

Կ. Պօլսոյ և շրջակայից համար տասն երեսփոխանաց ընտրութիւնը այս Պատուիրակներուն միջոցաւ հետեւեալ կերպով պիտի կատարուի:

16. Պատուիրակներն հրաւերեալ տեղը գումարուելով վիճակաւ իրենց մին նախագահ պիտի ընտրեն: Քանակաւորորդ յօդուածոյ մէջ նշանակուած երեսփոխանական ընտրելաց քաղաքապետութեան ապարանքը պահուած ցուցակը Պատուիրակաց պիտի ներկայացուի: Գուցակին մէջ գտնուած անձինք՝ երեսփոխան ընտրուելու համար անձամբ կամ փոխանորդի միջոցաւ հաճութիւն յայտնած պէտք է ըլլան: Պատուիրակներն այն ցուցակէն կամ անկէ դուրս երեսփոխանական հանգամանք ունեցող անձինք ընտրելու ազատ պիտի ըլլան, ըստ հետեւեալ յօդուածոյ տրամադրութեանց:

17. Ըստ չորրորդ յօդուածոյ առ ժամանակեայ հրահանգին, երեսփոխանական ընտրելութեան հիմնական պայմաններն են՝ ընդհանուրին վատահոլութեան արժանի գործ և ընտրացք, հասարակութեան համար մարումը վայելելու համար բարի վարք ունենալ, հասակը քան եւ հինգ տարին լրացուցած ըլլալ, կենացը մէջ ոճրագործութեան յանցանք դատապարտութիւն կրած չըլլալ, փոքր ի շատէ կալուածի տէր ըլլալ: Բայց եթէ երեսփոխա-

նական ընտրելի անձինք տե-
րութեան պաշտօնի վրայ են ,
իրենց ընտրութենէն ետեւեւեւ
է որ պաշտօնէ հրաժարին : Իւ-
րաքանչիւր վիշակեթէ ընտրե-
ւած երեսփոխան՝ միայն իւր
գաւառը կամ բնակչաց մէկ մա-
սը չներկայացնելու, այլ Օսմանեան
կայսրութեան բնակչաց ընդ-
հանրութիւնը :

18. Սոյն յայտարարութեան
տրամադրութեանց համեմատ ,
ընտրութիւնները քաղաքապե-
տին (Շէհրէմինի) ներկայութեան
պիտի կատարին, որպէս զի ընտ-
րութիւնն անոր հսկողութեան
ներքեւ օրինաց համեմատ 'ի
գործ դրուելիւրաքանչիւրՊատ-
ւիրակ՝ ընտրելեաց ցուցակին
մէջէն կամ անկէ դուրս երես-
փոխանական ընտրելութեան
հանգամանք ունեցող հինգ
իսլամ և հինգ ոչ-իսլամ անձանց
կրնայ քուէ տալ հետեւեւեւ
կերպիւ . Պատուիրակներն ընտ-
րելեաց անունները քուէթուղ-
թի վրայ կը գրեն և զայն քը-
ւէտուիլը կը ձգեն : Քուէարկու-
թիւնը վերջանալէ ետեւ, ի ներ-
կայութեան նախագահին քուէ-
տուիլը կը բացուի և քուէները
մի առ մի կարդացուելով, բա-
ցարձակ մեծամասնութիւն՝ այն
է քսանէն աւելի քուէ վաստը-
կողներն երեսփոխան պիտի բը-
լան :

Եթէ այս առաջին քուէար-
կութեամբ երեսփոխանաց պէտք
եղած թիւը չչցուի, երկրորդ և
երրորդ քուէարկութիւն կը բը-
լայ, միշտ առաջին քուէարկու-
թեան եղանակին համեմատ, և
տանն երեսփոխանաց ընտրու-
թիւնը նոյն օրը պիտի վերջանայ :
Եթէ վերջին քուէարկութեան
մէջ քուէից հաւասարութիւն
պատահի, վիճակ կը ձգուի և
վիճակը որու որ եղնէ այն երես-
փոխան կը լլայ :

19. Ընտրեալ երեսփոխանաց
անուններն ու մականունները
կարձանագրուին, և իրենց ընտ-
րութեան վրայ տեղեկագիր մը
կը պատրաստուի , զոր ներկայ
գտնուող պատուիրակներուն
բոլորը կը քննեն : Ս,յս տեղեկա-
գիրը քաղաքապետին ձեռամբ
Պետութեան խորհրդոյ նախա-
գահին կը ներկայացուի և նա
ալ Տպագրական վերատեսչու-
թեան կը յանձնէ, որպէս զի զա-
նազան լեզուներով լրագրաց
մէջ հրատարակի :

20. Եթէ Կ. Պօլսոյ և շրջա-
կայից երեսփոխանութեան ընտ-
րեալ անձանց մին հրաժարի ,
կամ ուրիշ պատճառաւ երես-

փոխանական աթոռ մը պարագ
մնայ , քաղաքապետութիւնն
յիշեալ քառասուն Պատուիրակ-
ները կը գումարէ և վերագրեալ
կերպիւ ուրիշ երեսփոխան մը
կընտրուի :

21. Երեսփոխանական ընտ-
րելութեան փափաքող անձինք
իրենց անունն ընտրելեաց ցան-
կին մէջ անցնելու համար, պաշ-
տօնական կերպիւ քաղաքա-
պետութեան յայտագիր (Թագ-
րիր) մը պիտի ներկայացնեն
պատուիրակաց գումարումէն ա-
ռաջ . կրնան նաեւ իրենց բա-
րեկամաց միջոցաւ վիշակելի
մը պատրաստել հետեւեւեւ կեր-
պիւ . ստորագրագրեալքս կը
հաստատեմք որ այս ինչ անձն
երեսփոխանական ընտրելու-
թեան արժանի է : Ս,յս վիշա-
կագիրն՝ որ Կ. Պօլսոյ և շրջա-
կայից բնակիչներէն ընտրութեան
մասնակցելու հանգամանք ու-
նեցող գոնէ երեք հարիւր ան-
ձանց կնիքը պիտի կրէ , պէտք
է որ պաշտօնապէս հաղորդուի
քաղաքապետութեան : Ընտրել-
եաց քուէ վաստկցնելու համար
լրագրաց միջոցաւ հրատարա-
կութիւններ ալ կրնան լլայ :

22. Վերագրեալ կերպիւ Ե-
րեսփոխան լլայու համար՝ ընտ-
րելութեան պաշտօնապէս փա-
փաք յայտնող անձանց անուն-
ներն և իրենց յայտագրերը քա-
ղաքապետութեան միջոցաւ այլ
և այլ լեզուէ լրագրաց մէջ
կը հրատարակին , և պատուի-
րակաց գումարման ժամանակ
անոնց ալ հաղորդուելու համար
տուժարի մը մէջ կարձանագրին :
Սոնց վերաբերեալ թուղթերն
ի հարկին ներկայացուելու հա-
մար կը պահուին :

23. Ընտրելեաց անունները
վերագրեալ կերպիւ լրագրաց
մէջ հրատարակուելէ ետեւ, մի-
շեւ մէկ շաբաթ ընտրելութե-
նէ ետ կենալու համար քաղա-
քականութեան պաշտօնապէս
յայտագիր չմատուցանող ան-
ձինք՝ ընտրելութիւնն ընդու-
նած պիտի համարուին : Ընտրե-
լութիւննէ ետ կեցող անձանց
յայտագրերը քաղաքապետու-
թեան միջոցաւ պիտի հրատա-
րակին :

Կ. Պօլսո 16 Ձիշիճճէ 1293.

Կ. Պօլսոյ մէջ արժէթիթոյ
գիներուն յանկարծական ելլէջը
տակաւին կը շարունակուի . ա-
մեն մարդ ստակը ձեռքը գրե-
թէ հաց գտնելու անկարող վի-
ճակի մէջ է . անոնք որ բան մը

արել տուած ասեննին՝ շատ
պղինձ մի տար, ուլ պիտի կրէ
կըսէին՝ հիմայ պղինձ դչնոցը
հինգ լիւրայի չափ սկսան պաշ-
տել . ամեն ապրանք իր կրկնա-
պատիկ գինն ելաւ . մինչև իսկ
ներքին բերքերն այս վիճակին
մէջն են . բոլոր եկեղեցիներն
չըջարեբութեան տամակ հանե-
ցին և հասարակութենէն յու-
սացուածէն աւելի յարգ գը-
տան , վասն զի ինչ ընեն մանր
առեւտուրի տէր մարդիկ երբոր
մանր ստակ չունին . սակայն ի՞նչ
պիտի լլայ ասոր վերջը . եթէ
ոսկիին գինը բարձրացաւ՝ ասոր
Եւրոպա երթալն է պատճառ-
բախտ . լաւ , պղինձն ուր դնաց,
աս ալ Եւրոպա քաշեց կրնա՞նք
բախտ միթէ :

Չարմանօք կը հարցնեն ա-
մեն մարդ թէ՛ կամուրջը ի՞նչ
կրնէ առած պղինձը՝ որնոր օրը
20000 դշ էն աւելի միմակ պը-
ղինձ կը քաշէ . միթէ այն ալ
ստակ վտխելէ չահեղձ ելաւ .
միթէ տարակոյս կա՞յ ասոր,
մինչդեռ եթէ մէկ քանի մեծ թա-
ղերու մէջ կեդրոններ հաստատ-
ուեր, միայն կամուրջին մուտքս
վը հասարակաց դիւրութեանը
համար թղթագրամ փոխելու՝
բաւական էր թղթին գինը պը-
ղինձով հաւասարակչուութեան
մէջ պահելու , առջի թղթագը-
րամին առեն ալ երբեմն ասանկ
ներդութիւններ կը քաշուէր , ո-
րոց գէ՛մ զեպիլէրը պղինձ դրամ
կը զրկուէր հասարակութեան
թղթագրամով փոխանակելու :

Հիմայ ալ եթէ ատանկ մի-
ջոց մը ձեռք առնուի, ժողո-
վուրդը քիչ մը դիւրութիւն գը-
տած կը լլայ, վասն զի հիմայ ինչ-
պէս ըսինք՝ խոնութպանի մը
ձեռքէն 10 բարայ պղինձ դը-
րամ առնել անհնարութեան
կարգն անցած է . ասոնց ամենքն
ալ ձեռքերնին անցած պղինձը
դրամափոխին տանելով անկէ
չահ մը հանելու համար կը պահեն
սակայն երբոր թղթագրամին և
պղինձին գիներուն հաւասարա-
կը շուտութիւնը բռնուած լլար,
այդ շահը բնականաբար չը
պիտի գայանար :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Իթթիհատի մէջ մեր Ս. Պատ-
րիարքին բերանը դրուած քանիմը
քաղաքական խօսքեր տեսնաք,
լա թիւրքի ալ նոյնը օրինակեց
իր թերթին մէջ , մեր ազգային
թերթերն ալ օրինակեցին և լրա-
գիր՝ որ ամեն քաղաքական

դէպք շատ կանուխէն դուշա-
կած լլայու տղայամուտիւնն
ունի , Ս. Պատրիարքին այդ
խօսքը շատոնց լաւ է եղեր Ս.
Պատրիարքի բերնէն , բայց հը-
րապարակ հանել չէ ուղած ե-
ղեր . ինչ և ինչ սա ալ հաստա-
տեց թէ Ս. Պատրիարքը այդ
խօսքն բեր է , այսինքն բեր է
եղեր թէ՛ Հայոց ազգը քոնփե-
րանին առջև դնելու ինդիր
չունի , և եթէ կայ ինդիր մը՝
այն ալ Ռուսահայոց վիճակին
բարեբանն ինդիրն է :

Ս. Պատրիարքին այս խօսքը
եթէ իրօք բրած է՝ շատեր ան-
պատեհ կ'համարին . մանաւանդ-
բուսահայոց՝ Բուսիոյ կայսեր
մատուցած աղերսագրին դէմ
հարուած մը կը նկատեն, այն ա-
ղերսագրին որով Բուսիոյ հայերն
ճաճկաստանի Հայոց վիճակին
բարեբանը ինդիրցին իրենց
վեհապետին միջնորդութեամբը
Սակայն մեք՝ ուրիշներ որպի
ալ հաւատալ ուզեն թէ՛ Ս. Պատ-
րիարքն այդ խօսքն բրած է՝
չենք կրնոր հաւատալ թէ բ-
սած լլայ, վասն զի բսած է բ-
սողներն՝ չեն յիշեր երբէք թէ՛
որո՞ւ բսած է, ի՞նչ պատեհու-
թեամբ բսած է որո՞ւ օրառ ար-
կութեանը դէմ բսած է, չենք
կրնոր հաւատալ մանաւանդ երբ
յիշենք Ն. Սրբաղնութեան Լճմի-
ածնէն դարձած ատենը բսած
խօսքերն ասով չենք ուզեր բախ-
թէ Ս. Պատրիարքը այն ատեն
Բուսիոյ հայոց վիճակը լա-
նկարագրեց, ոչ, սակայն բաղ-
դատութեան մէջ անոնց անհա-
տական կեանքը երջանիկ, իսկ
ազգային կեանքը դրականա-
պէս մենէ շատ նուստո գտաւ
այս երկու կարգ կենաց մէջ
որն է միւսը վտտեցնողը՝ շատ
մեծ ուշադրութեամբ քննելու
և ըստ այնմ պատասխանը տա-
լու ինդիր մ'է :

Ասոր ծանրութեանը մենէ
աւելի տեղեկի է Ս. Պատրիար-
քը՝ ուստի և ատոր համար չենք
կրնար հաւատալ թէ Նորին Սըբ-
բաղնութիւնը ասանկ ամենածա-
նը ինդրոյ մը վրայ վճիռ մը
տուած լլայ անունը չը յայտնը-
ուած մէկու մը , հետեւաբար ի-
բաւունք ունինք հաւատալու
թէ Նորին Սրբաղնութեան բե-
րանը դրուած է այդ վճիռը
քանահամար :

ՆԵՐՔԻՆ

Երէկ Լորտ Սայիզպուրի վեհ. կայսեր ներկայութեանն ընդունուելով կէս ժամու չափ տեսակցեր է :

Շարաթ գիշեր արտաքին դործող պաշտօնեայն, արդարութեան և առևտրական գործոց և դանձային գործոց պաշտօնեայները Մեծ Եպարգոսին ապարանքն երթալով մինչև կէս գիշեր ժողովքի նստած էին :

Հունգարացի նուիրակները երէկ Մեծ Եպարգոսին ապարանքն դային :

Երէկ Մեծ Եպարգոսը տաբեզլի չորհուրութեան համար Յունաց Պատրիարքարանը դացեր է :

Երկու դրահաւոր նաւեր այսօր երկու օտարայէն մայրաքաղաքս պիտի գան :

Ուրբաթ օր Նորատունկեան էֆէնտիի թաշ խանի սենեակը դող մաներով 5-6000 լիրա գողցեր են գացան կտորելով :

Գողերը տակաւին ձերբակալուած չեն . միայն սենեկապետը բանտարկուած է :

Ղալինեանի Մեսաթէր լրագիրը Անգղիական ազգին Լորտ Տէրպի տուած ալերագրոյն օրինակը հրատարակած ըլլալով, մեք ալ պատշաճ դատեցինք զայն հոս թարգմանել :

Միւրօրա .

Կազմենք որ արևելեան խնդիրը յոշող սա վերջին տարիներս Բուսիոյ անպատշաճ ընթացքը լու գիտողութեան առնուի . Ուալինիթքնի դաշնագրոյն համեմատ չեղք տէրութեանց միոյն համար իւր ժողովրդեան նպատակ խստիւ պէտք է որ արգելու և Անգղիոյ կողմանէ այս յօդուածոյն կատարեալ չարհուելուն վրայ Սմերիկոյ հասարակապետութեանը բողոքեց ձիններայի մէջ կողմնածարտաքոյ կարգի տեսանք ըստիպեց որ մեծ տուգանք տանք Սմերիկոյ և մենք ալ տուինք :

Սրդ ամենուն յայտնի է թէ Բուսիա չարգիլեց իւր ժողովուրդը բարեկամ տէրութեան մէջ դէմ նպատակ է . ընդհակառակն Բուսիա Սմերիկոյն իւր պաշտպանութեանը ներքև առնելով ամեն տեսակ նպատակն յայտնի ձեռնկալեց . ուստի գիտնալով որ մեր վեհափառ թագու-

հին արդարաւորութեամբ կողք արևելեան խնդիրը լուծել յանուն Անգղիական ազգին կը պահանջենք որ ազգաց իրաւունքը պաշտպանուի և Բուսիա Բրիտան տուգանք վճարէ . այսու հանդերձ պարտ անձին կը համարվիք յայտնել բարձրութեանը թէ այս խնդրոյս նկատմամբ ինչ որ ալ արդարութեամբ վճարու ըլլաք դուք պիտի ըլլանք :

Թայմըզ ժէնեթալ Չէրնայէֆի վրայ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ :

Չէրնայէֆը Քիչնէվէն մեկնեցաւ Սերվիա վերադառնալու համար . Ռուսիոյ բանակին մէջ դտած ընդունելութիւնք բարեկամական էին , տուած պատերազմներովը Սերվիոյ մէջ գըտած համարումը կորանցուց , եթէ յաջողելու ըլլար դիւցազն պիտի անուանէր , ինչեւիցէ հիմակու հիմայ դժբաղդ զօրավարաց բազմին ենթարկեալ է , և իւր յանցանքը մեծագոյն համարուեցաւ Ռուսիոյ զինուորակաւորութիւնն ալ իւր ձախորդութեանցը հազորդակից ընելովը : Միւրան ինչանք զինքը ըջանելու միտք չունի , բայց Նիքիթայի ընդհանուր բանակի հրամանատար կարգուելովը դժուարին է դուշակել թէ Չէրնայէֆի ինչ պաշտօն պիտի տրուի , կը յուսացուի որ պատերազմական գործոց պաշտօնեայ և բանակի վերանորոգիչ անուանուի , իսկ գալով այն ամբաստանութեան թէ Չէրնայէֆ Ռուսիոյ մէջ կազմուած յանձնաժողովներէն ի նպատակ և ի նուէր յաւաքուած ստակը դէշ մատակարարելով վասնած ըլլայ , յայտնեալ է եղած նուէրները Սերվիոյ դանձատունք պիտի մտնան ուղղակի և Ռուս կամուտրաց վարչութիւնը թօշակ պիտի ապ և յայտնեալ է Ռուսք զատ մարմին պիտի չլրագին , այլ ընդհանուր սերվիական բանակին զինուորքը պիտի համարուին :

Անցեալ գիշեր Բրուսիոյ դեսպանատան մէջ բոլոր դեսպանաց հացկերոյթ մը տրուեցաւ :

Կայսերական բժշկարանի այս տարուան քննութիւնքը տարւապարտական եղող աշակերտաց հիմակուքնէ քննութիւն տարու հրաման ելաւ ժամ մ'առտոջ պէտք եղած կողմերը զրկելու համար :

Վեոմօսքի Ռուս լրագիրը

հետեւեալ խորհրդածութիւնը կընէ :

Օսմանեան պետութեան դէմ պատերազմ հրատարակելը մեծ խոհեմութեամբ պէտք է ըլլայ , վասն զի չէ թէ միայն Թիւրքիոյ դէմ հարկ է մարտնչել այլ ամբողջ Եւրոպիոյ քաղաքականութեանը դէմ որոյ ձեռքն է Թուրքիոյ արդի էութիւնը : Չենք տարակուսիր մեր զինուոց դերազանցութեանը վրայ , թշնամին յաղթելու խնդիրը ամենապարզ և յայտնի խնդիր մ'է մեզի համար , բայց Թուրքիոյ յաղթել և յաղթողաբար խաղաղութիւնը կնքել միևնոյն բանք չէ , կըրնանք պատերազմ մեր և Թուրքիոյ մէջ ներխակեալ պահել բայց հուշակաւոր յաղթութիւններէ վերջն ալ չէ թէ Թիւրքիոյ հետ այլ զայն պաշտպանող քաղաքականութեան հետ հաշտութիւն կնքելը խիստ դժուարին է , այնպէս որ պայծառագոյն յաջողութիւնք անգամ միտաքած արդիւնքնիս չախտի արտադրեն , ուստի յուսահատ և կատաղի պատերազմն Ռուսիոյ համար ապարդիւն և աղետալի պիտի ըլլայ . . . :

Ներկայ քաղաքական վիճակին տագնապը մահմետականաց մոլորուանդութենէն չէ այլ Եւրոպիոյ արքունեաց մէկ մէկու վերայ ունեցած անխտահարութենէ և առկէ պիտի ծագի պատերազմ եթէ ծագելու ըլլայ : Ի զուր համարել կը ջանան անոնք որ կը կարծեն թէ Արևելեան խնդիրը Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ իրակեալ մնայ , կամ եւրոպական պատերազմ պիտի ծագի կամ ամենեւին պատերազմ չպիտի ըլլայ :

Թիւրքիա չկրնար առանց օտարի օգնութեան պատերազմի ելլել Ռուսիոյ դէմ : Ռուսիա ալ չկրնար պատերազմի ձեռնարկել ինչուան որ առաջուց և Թուրքիոյ և օտար տէրութեանց մէջ խաղաղութեան պայմաններն չը կնքուին , վերջապէս անհնարին է որ Ռուսիա պատերազմ հրատարակէ մտածելով որ այն պատերազմն վերջը եւրոպական դաշնակցութեան մէջ դէմը պիտի դանուի և պիտի բռնադատուի յետ այնչափ զոհորդութեանց նոյն կետին վրայ դառնալ յորմէ մեկնած էր :

Հինգշաբթի օրուան դեսպանաժողովոյն վրայ երկար խօսիլ հարկ չենք համարիր , հասանական կը թուի մեզ որ այս նիստը վերջինն ըլլայ :

Եղած առաջարկութիւնքը Բ. Գուռը մերժեր է , որով եւ խառն մասնաժողովոյ մը կազմութիւնը և տեղակալաց ընտրութեան Եւրոպիոյ ալ միջամբտելը Բ. Գուռն վերջնական կերպով մերժած է . երկուշաբթի օրը ութերորդ և յետին անգամուան համար դեսպանք ժողով մ'ալ պիտի կազմեն և իրենց վերջնական որոշմունքը պիտի տան :

Քիչնէվէն եկած վերջին նամակներուն մէջ կը կարգանք թէ պահանորդ զօրաց մէկ մասը Ռուսիոյ ներքին կողմերը զրկելու պատրաստութիւնք կը տեսնուին և Պետարապոյ մէջ կեդրոնացեալ զօրքերը ընդարձակագոյն դժի մը վրայ առնելու , ընդհանրապէս Բուսք ձեռնուան մէջ պատերազմ ընելը անկարելի կը կարծեն . օրիորդաց գիշերօթիկ դպրոցին տեսչուհին հրաման ընդունեցաւ դպրոցը չը գոցել մինչև նոր հրաման մը չելլէ . վաճառականք յունալար մեկին տեղ փետրուարի կամ մարտի մէկին տան պիտի իրենց ապրանքը :

Նայ Ֆրայ լրագիրը կըսէ թէ ինչաթիէֆէն ի զատ և ոչ մէկ դեսպանի մը Պօլսէն մեկնիլը հաւանական չէ . բայց Գեսպանաժողովը եթէ ապարդիւն ելլէ այն ատեն մասնաւոր կերպով զրկուող լիազօր անգամք միայն պիտի մեկնին :

Հուլիսայէն յունալար 4 ամսագրով հեռագիր մը Ս. Պապին ծանր հիւանդ ըլլալը կը ծանուցանէ :

Ռուսիոյ կառավարութիւնը հարաւային երկաթուղեաց վերատեսչին հրամայած է որ վերաւորեալ և խօթացեալ զինուորաց համար 430 կառք միշտ պատրաստ գտնուին :

Պուքրէչէն յունալար 11 ամսագրով հետեւեալը կը հեռագրեն . Պաշք պօզուքներու խուսբը յունալարի Տին Գանուրը անցնելով գիշեր ատեն ֆալարապիէն ութ ժամ հեռու նամակաբերի մը վրայ յարձակել և կողպտեր են . երկու Ռուսմանիացի ոստիկանք վերաւորուելով մեռեր են , այս բռնաբարութիւնը Ռուսմանիոյ մէջ մեծ յուզմուկը պատճառեց :

ՏՕԲԹԵՕԻ ՃԷԼԱԼ

Մանաւոր դարմանիչ Սբե- սիաղիսթ Գաղիական ախտի և նոյն կամ որ և է պատճառաւ ծագում առած ամբողջ ծընըն- դական գործարաններու վերա- բերեալ հիւանդութեանց :

Ինչպէս ծանուցինք, Տօք- թէօն ճէլալին թէ իւր աշակեր- տութեան ժամանակ և թէ վը- կայեալ բժիշկ անուանուելէն վերջը մանաւոր ուսումն քրած քլլալը թէ Գաղիական և թէ ուրիշ որ և է տեսակ ծննդա- կան գործարաններու վերա- բերեալ հիւանդութեանց ճիւ- ղերուն մէջ, և որուն այս մա- սին ունեցած ճարտարութիւնը շատերուն ծանօթ քլլալն գիտ- նալով, կը ծանուցանենք Ար- գոյ Հասարակութեան, որ ա- մեն կիրակի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերն ժամը 6էն մինչև 10ը հիւանդ- ներ պիտի ընդունի իւր բընա- կարանը որ է Բերայ թարլա- պաշի ճատտէսի թիւ 117 և ա- մեն երկուշաբթի, չորեքշաբ- թի և ուրբաթ օրերը ժամը 6էն մինչև 9ը Պահճէգարու Համի- տիյէ թիւլպէին դէմի կարդը իքի գարուլու Սինապեան վի- ջէն էֆինտիի դեղարանը թիւ 32:

ԳԵՐԱԿԱՆ

130 պատկեր, 48 երեսէ բազկացեալ ընտիր թղթով և կազմեալ. կեդրոնատեղին է Չարդարեան գործարան Կ. Պօ- լիս Սուլթան Համամ թիւ 14 կը գտնուի նաև ամեն գրավա- ճառաց քով: Գին 40 փարայ: Գպրոցաց համար հարիւրին 10 ղերջ:

Աղբ. Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթօր Գաբրիէլ էֆէն- տի Նահապետեան, այսուհետև ամեն չորեքշաբթի օրերը ժամը 6էն 8 Սամաթիա իմրահօրը թօ- գաթլեան Պ. Գաբրիէլի դեղա- րանը, և ուրբաթ օրերը ժամը 6էն 8 դարձեալ Սամաթիա Մ. Ճիվանաքիին դեղարանը, նաև Հիւանդանոց իրեն դիմող աղ- քատ հիւանդաց ըստ առաջնայն ձրի նայելու պատրաստ քլլալը կը ծանուցանէ արգոյ հասարա- կութեան:

Ի Լ Ա Ն

Միշրուն Արիպեան Եաղճը խանընտա իւսթ գաթ- տա 21 նիւմէրօլու օտատա հաֆ-

թատա հէր կիւն էօյլէնաէն սօն- րա թալիպ օլանլարա լիսան լէ- տաֆէթ պէյանը թիւրքի թա- լիւ վէ շակիրտանը հէր վէճհէ խօշնուա իտէճէք տիր:

ՏՕԲԹՕՐ ՄԱՐԲԵՐ

Վիէննա մէքթէպլէրինտէ օն պէշ սէնէ մուգատտէմ տիբլումա ալմը վէ պիր չօդ էլրոպա խաս- թախանէլէրտէ բրօվա իթմիշ օ- լան ասքթօր Մարքեր՝ պու տէ- ֆա Պէշլիթաշտա Բաշա մա- հալլէսինտէ Բում քիլիսէսի գար- շքընտա 4 նիւմէրօլու քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 3-3է բազարտան մատա ֆա- գիր խասթալարա մէճճանէն սրա- գաճագ տըր:

Բազար իրթէսի, չարշամպա վէ ճումաա կիւնլէրի սաաթ 7- 9ա գատար թագսիմտէ Պաթիր- վիլ էճղախանէսինտէ, վէ սալը վէ բէրլէմպէ վէ ճումաա իր- Թէսի կիւնլէրի Գալաթատա վօյլօտա սօգաղընտա Բօլօնէլ էճղախանէսինտէ սաաթ 7-9ա գատար պուլունուպ հէր նէվի խասթալարա պագաճագ տըր:

Պունտան մատա վազթթ- լարտա պալէատէ զիքր օլունան խանէսինտէ պուլունուր:

Միւմայիլէյս ասքթօր, ճէ- րահլըդ վէ էպէլիք վէ բահիմ իւֆիւնէթի, գանլը վէ գուրու պատուր, սթթմա, կէօյիւս, տէ- ռի խասթալըղը, ֆրէնիկ վէ օն- տան գալմա գուլագ, պուրուն կէօղ վէ բահիմ վէ էէլլէրի նէ գատար էսկի օլա բէհրիզիլ աղ վազթթ ասքթընտա տէֆ ի- տէճէք, վէ պէլ սուղլուգ էէնի վէ էսկի քէնտի ալէաթընտա օն տէֆատա տէֆ իտէճէյիլի ի- լան իլլէր:

Գեկտ. 9

Ը Ն Դ Ս Ր Չ Ա Կ

ՕՐԱՑՈՑԵ 1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ ԲՐԻՍՏՈՍԻ

յերէմիա քահանայէ խաղիլի Պարունակութիւնք.— Վէհ. կաթողիկոս ամենայն Հայոց, և Բարձրաշնորհ Պատրք. Կ.Պօլսոյ: Աղբ. Ընդհ. Ժողով, բաղ- կացեալ ի 140 անդամոց յակա- նէ անուանէ նշանակեալ, և ըստ իւրաքանչիւր դաւառաց Տաճ. կաստանի: Աղբ. վարչութիւն, կրօն. և

Գաղ. Ժողովոց անդամք և պաշ- տօնք նոցա:

Աղբային դիւանատուն և գործադիր պաշտօնեայք:

Գատաստանական՝ Ուսում- նական՝ Տնտեսական խորհուրդ և Ելմտական հոգաբարձութիւն և պաշտօնք սոցա:

Ընդհանուր ցուցակ առաջ- նորդաց և առաջնորդական տե- ղապահաց Տաճկաստանի դա- լառաց:

Ցուցակ երկուեռ անուանց միտելի երախայից պաշտօնա- պէս աւանդեալ ի նախորդ կը- թօնական ժողովէ ի դիւրութիւն աղբայնոց:

Շքանուանք ըստ իւրաքան- չիւր աստիճանի և արժանեաց պատկանեալ:

Տաճկաստանի կայսր և կայ- սերաղունք:

Բարձրաստիճան նախարարք Օսմանեան տէրութեան:

Հայազգի զանազան պաշտօ- նատարք Օսմանեան կառավա- լութեան ի Բ. Դուռն արքունի:

Վիճակագրութիւն բոլոր աղբային վարժարանաց Կ. Պօլ- սոյ և որքանութիւն Հայազգի երկուեռ աշակերտաց և տարե- կան ծախք ուսուցանող վարժա- պետաց:

Որ բոլոր գրավաճառաց քով կը վաճառի

ի Գին 3 ղըշ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՄՆ ՄԱՐԻՕՆՍԵՂՕՐՄԻ

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Ն Ք Ը կամ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆԻ Էրդինակ

ԷՕԺԷՆ ՏԸ ՄԵՐԳՈՒՐ

կը ծախուի Եէնի-ճամի Չիլին- կիլլէր ճատտէսի թիւ 8, Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը գին 2 ֆրանք:

Ամբողջ գործը 2 հատորէ պիտի բազկանայ:

ԲԱՐԻՐՆ ՅԱՄԵՐԻԿԱՅ

ԳՈՐԾ Է. ԼԱՊՈՒԼԷՅԻ

Այս եղական գործին երկ- բորդ և վերջին հատորն ալ իզ- միրի Տէտէեան տպարանէն հա- սած քլլալով, կը գտնուի Եէնի ճամի փողոց, Չիլինկիլլէր ճատ- տէսի, թիւ 8, Ս. Ղ. և Եաղ- մաճեան գրատունը:

Գին 2 ֆրանք:

ԱՐԱՄԵԱՆ ՏԱՐԵՆԻՇ

1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ

Ի ԳՐԱՏԱՆ ՓԱՐԻՉՈՒ Կ. ՊՕԼԻՍ

Չագմագնրլար, Ակոբեան խան. Թիւ 13

ԳԻՆ, ՄԷԿԷԼԵՆԳՆՈՅ ԹՎՈՒԳՐՄ

կը ծախուի նաև ի Պօլիս. — ի Գրատան Պաղտասար աղայի Սըրուպեան. Մէրճան թիւ 33:

Եւ ամեն գրավաճառաց քով:

Ի Ղալաթիա. — ի Թիթալա- ճառանոցի Յ. Սըշակ էֆէնտիի. Մահմաւիէ ճատտէսի թիւ 15.

Նուէրի համար. — Մհաաք- սեայ և թաւչեայ փառակաղմ, և այլ և այլ տեսակ ոսկեղօծներ զանազան գներով:

ՕՍՍԻԱՆՈՒ

ՄԿՈՎՏԻՍՅՈՒՆ ԲԵՐԹՈՂԻՆ

Գ. ԴՍՐՈՒՆ

Գ Ե Ր Թ Ո Լ Ս Ժ

Թարգմանէց

Պ. Յ. ԱՏՐՈՒՆԻ

Սոյն հեղինակին քերթուա- ծոց արժէքը որ մինչև Հոմբրօսի հաւասար կը համարին բաղումը յեւրոպացի գրագիտաց, այժմ հայերէն աշխարհագրաւ լեզուի թարգմանուած ու տարգրուած է, իրաւամբ կարժէ որ գտնուի ամեն հայ բանասիրաց գրատան մէջ: Կը վաճառի Մէրճան չարը գրավաճառ Սրապեան Պաղտա- սար աղայի և ուրիշ գրավա- ճառաց քով:

Գին 5 ղշ

Յառաջագէմ աշակերտաց Յամար կաղանդի նուէր տալու ալ շատ յարմար է:

Պ. ՏԸ ԳԱՄՕՐ

Թարգմանեց Գ. Չիլինկիլլեան Հրատարակիչն Տէպէեան կը ծախուի Ս. Ղ. և Եաղ- մաճեան գրատունը, Գին 1 ֆրանք 30 սանդիւմ:

ԻՄԲԱԳԻՐ

ՏԷՐ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆՍՏՈՒ ՕԳՍԷՆ ԽՅՃԱՍՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՅՃԱՍՍԱՐԵԱՆ ԵՆՈՒՄՖԵԱՆ ԽԱՆ ՎԵՐԻ ԵՍՐԻ ԹԻՒ 7